

## «ՕՆԼԱՅՆ ԱՄԱՌ» ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԽԱՂԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Գովազդային վիճակախաղը (այսուհետ՝ վիճակախաղ) անցկացվում է «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Կազմակերպիչ) կողմից:
2. Վիճակախաղի ներքոգրյալ պայմանների կատարման պարագայում դրա մասնակիցներին հնարավորություն է ընձեռվում ստանալու 3 հատ Xiaomi MI Note 10 Lite սմարթֆոններից կամ 7 հատ Xiaomi Mi Wireless AirPods Pro ականջակալներից մեկը:
3. Վիճակախաղին կարող են մասնակցել Ամերիաբանկի ֆիզիկական անձ հաճախորդները, ովքեր ս.թ. հուլիսի 1-ից մինչև 2020 թվականի օգոստոսի 1-ը ներառյալ Ամերիա Օնլայն/Մոբայլ բանկինգ համակարգի միջոցով կկատարեն 3 օնլայն գործարք՝ յուրաքանչյուրը նվազագույնը 3000 ՀՀ դրամի չափով:
4. Յուրաքանչյուրը նվազագույնը 3000 ՀՀ դրամի երեք գործարք կատարած հաճախորդը Բանկում գրանցված իր Էլեկտրոնային փոստին, Օնլայն/Մոբայլ բանկինգ համակարգի միջոցով կամ գրանցված բջջային հեռախոսահամարին մինչև օգոստոսի 12-ը ներառյալ կստանա գովազդային վիճակախաղի մասնակցության հերթական կոդ: Ընդ որում, եթե հաճախորդը կատարում է 3-ից ավելի նվազագույնը 3000 ՀՀ դրամի, ապա յուրաքանչյուր 3 այդպիսի գործարքի համար ստանում է առանձին կոդ՝ այդպիսով մեծացնելով գովազդային վիճակախաղի հաղթող դառնալու հավանականությունը:
5. Սույն գովազդային վիճակախաղի առումով գործարք են համարվելու Ամերիա Օնլայն/Մոբայլ բանկինգ համակարգերի միջոցով իրականացված բոլոր փոխանցումները, ներառյալ՝ Նշված չափանիշներին համապատասխանող արտարժույթային փոխանցումները՝ բացառությամբ հաճախորդի սեփական հաշիվների միջև կատարված փոխանցումների: Արտարժույթային փոխանցումները հաշվարկվելու են գործարքի հաստատման օրվա դրությամբ Ամերիաբանկի փոխանակման կուրսով:
6. Հաճախորդի՝ Վիճակախաղին մասնակցելու իրավունքը ծագում է սույն պայմաններին համապատասխան հերթական համար(ներ)ը Բանկում գրանցված իր Էլեկտրոնային հասցեին ստանալուց հետո:
7. Վիճակախաղի ընթացքում հաղթող կճանաչվեն այն հաճախորդները, որոնց բանկում գրանցված Էլեկտրոնային, Օնլայն/Մոբայլ բանկինգ համակարգի միջոցով կամ գրանցված բջջային հեռախոսահամարին ուղարկված հերթական համարները պատահականորեն կընտրվեն Google Number Generator-ի միջոցով:
8. Վիճակախաղը կիրականացվի Ամերիաբանկի ֆեյսբուքյան էջի ուղիղ հեռարձակման միջոցով մինչև օգոստոսի 14-ը ներառյալ: Վիճակախաղի ուղիղ հեռարձակման օրվա և ժամի մասին բոլոր մասնակիցները կճանուցվեն Բանկում գրանցված Էլեկտրոնային հասցեի, Օնլայն/Մոբայլ բանկինգ համակարգի կամ գրանցված բջջային հեռախոսահամարի միջոցով:
9. Վիճակախաղի արդյունքում հաղթող ճանաչված համարները կիրապարակվեն Ամերիաբանկի կայքում և ֆեյսբուքյան էջում մինչև ս.թ. օգոստոսի 14-ի ժամը 23:59:
10. Հաղթող հաճախորդների հետ Բանկի աշխատակիցը կապ կհաստատի Բանկում գրանցված հեռախոսահամարով և/կամ Էլեկտրոնային հասցեով:
11. Մրցանակը ստանալու համար հաղթող ճանաչված հաճախորդը պետք է մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը ներառյալ՝ նախապես պայմանավորված օրը և ժամին, անձը հաստատող փաստաթղթով անձամբ մոտենա Ամերիաբանկի Կամար մասնաճյուղ: Նշված ժամկետում չմոտենալու դեպքում անհրաժեշտ է այդ մասին նախապես տեղեկացնել Բանկին: